Արձանագրություն N 3

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար .ավտոպահեստամասերի (սնուցման մարտկոց) ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20 սեպտեմբերի 2017 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գևորգյանը, անդամներ՝ Լևոն Հարությունյանը, Արթուր Մանուկյանը, Դավիթ Շատվերյանը, Գայանե Օսիպյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
Հայտերի արդյուքների գնահատման վերաբերյալ

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Գևորգյանը նիստը հայտարարեց բացված: Հանձնաժողովը ուսումնասիրելով «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի և «Վարմէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից ստացված եզրակացությունները /կցվում են/, հանձնաժողովի անդամների կողմից իրականացվեց հայտերի գնահատում /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

Հաշվի առնելով, որ «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն և «Վարմէքս» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացությունների համաձայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, հրավերով սահմանված ժամկետում ներկայացրած որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին՝

«Ֆլեշ Մոտորս»-ին ճանաչել որպես ընտրված մասնակից՝ առաջին չափաբաժնի մասով.

«Վարմէքս» ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից՝ երկրորդ չափաբաժնի մասով:

Գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/4 ծածկագրով գնման հրավերով սահմանված ժամկետում «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին և «Վարմէքս» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Կարեն Գևորգյան

անդամներ _____ Լևոն Հարությունյան

_____ Արթուր Մանուկյան

_____ Դավիթ Շատվերյան

_____ Գայանե Օսիպյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան